

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարեկան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿՈՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐՆԳՐԻ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մ շ ա կ կ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե թ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւ ը օ պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ը օ կ ա ս տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱԿԱՆ (Բազարնայա եւ Բարձրակայա փողոցների
անկիւնը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրուի հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Չ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Արտօնութեան առիթով.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Երկրաչափից փնտրածների
օգտին. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՍԱՀ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարաւ-աֆ-
րիկական պատերազմը. Նամակ Պարսկաստա-
նից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՍԳՐՈՒՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Ազատ ժամեր.

Թիւնը, շատ կան հանքատեղեր, որոնք
պարունակում են իրանց խորքերում թան-
գազին մետաղներ և բաղադրութիւններ և
նոյն իսկ նաւթ: Անկասկած երկաթուղին
գէտի ինքը կը գրաւի այն ամենը, ինչ-որ
կարող է արտահանութեան նիւթ դառ-
նալ և լաւ գին ստանալ վաճառանոցնե-
րում:

ԱՐՏՈՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Փոքր-Ասիայի երկաթուղիների հարցը
չարունակում է զբաղեցնել եւրոպական
հասարակութեանը: Այժմ այլ ևս կասկած
չը կայ, որ Ռուսաստանը արտօնութիւն է
ստացել երկաթուղիներ շինելու Սև ծովի
ափերի մօտ գտնվող հողերի վրա: Ճիշդ է,
այդ հողը ընդարձակ է իր լայնութեամբ
և ծովափից դեպի խորքը ձգվում է միայն
50—200 վերստ, բայց նա ունի մինչև
1000 վերստ երկարութիւն և միանալով
արագ հաղորդակցութեան միջոցով Ռու-
սաստանի հողերի հետ, նպաստում է ար-
դիւնագործութեան և առևտրի զարգացման:
Այն տարածութեան վրա, որ մտնում է
երկաթուղու գծի գործունէութեան շրջ-
անի մէջ, շատ կան հարուստ եւ պտղաբեր
հողեր, որոնք կարող են զարգացնել ըն-
դարձակ կերպով իրանց գիւղատնտեսու-

Սակայն ստացած արտօնութիւնը կա-
րող է աջողութիւն ունենալ միայն այն
դէպքում, եթէ երկաթուղու շինութիւնը
չը յետաձգվի տարիներով և գլուխ բերվի
կարճ միջոցում. երկաթուղին ինքը ստեղ-
ծում է իր շուրջը բազմաթիւ ձեռնար-
կութիւններ, որոնք դրոււմ են աշխա-
տող ձեռքեր և զբաղակցութիւններ: Եւ որքան
վաղ կը սկսվի մի այդտեսակ գործունէու-
թիւն, այնքան աւելի մեծ յոյս կարելի է
ունենալ, որ գործը կունենայ աջողութիւն
և զարգացում: Այլապէս, ուրիշ արդիւնա-
գործական կենտրոններ կը սկսեն զբաւե-
լ և դեպի իրանց ձգել շրջակայ բոլոր ար-
դիւնագործական ոյժերը:

Փոքր-Ասիայի ծովափը ունի զարգացման
համար շատ նպաստաւոր պայմաններ, ո-
րոնք ճնշված են մտնում մինչև այժմ փո-
խադարձ հաղորդակցութեան պակասու-
թեան և վարչական անկարգ վիճակի շնոր-
հիւ: Եթէ աջողվի Ռուսաստանին կարճ
միջոցում այդ արդիւնները վերացնել,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Որչափ անախորժ ականջի համար. որչափ
ճանր սրտի համար...
Ո՞վ ասաց. ինչու չը կայ:
Մեծացրէ՞ք թատրոնը. բացէ՞ք նոր, զուգահե-
ռական դասարաններ. մեծացրէ՞ք թերթի ծա-
ւալը, եւ... տեղ չտա կը լինի:

Այդ մենք էլ գիտենք. դուցէ եւ ձեզանից էլ
մի փոքր աւելի լաւ: Ինչո՞վ հապա:
Ինչո՞վ Փո՞ղ էք ուզում: Այդ ուրիշ բան է:
Սակայն այնքան էլ «ուրիշ» չէ, որքան կարծ-
վում է:

Տուէ՞ք գործ, առէ՞ք փող. որքան կամենաք:
Գործ էք ուզում, ամենայն ուրախութեամբ:
Համեցէ՞ք:

Վերցրէ՞ք «Մշակը»:
Քսան ութ տարի գործում է նա. նա ծա-
ռայել է եւ ծառայում է հայ ազգին: Ինչի մէջ
է կայանում նրա ծառայութիւնը՝ այդ մի ա-
հագին երկար պատմութիւն կը լինէր: Ամբողջ
հայ ազգը, հայ ժողովուրդը, աշխարհի որ ան-
կիւնում էլ նա գտնվէր, գիւղական աղքատ
խրճիթի սկսած, հարուստ քաղաքացու հոյա-
կապ պալատով վերջացած՝ օգտվել եւ օգտվում է
նրա ծառայութիւնից: Զայլ առ քայլ, օր օրի
վրա ժողովուրդը կրթվում, զարգանում է. նա

չըրված է այն շաւղի վրա, որ անսայթաք տա-
նում է եւ ի վերջոյ պիտի հասցնէ կուլտու-
րական քաղաքակիրթ ազգերի նախանձելի վի-
ճակին:

Հայ ազգատ մամուլի մէջ—մանաւանդ այժմ
—«Մշակը» բնութւ է յարգելի տեղ: Իր առա-
ջադիմական ուղղութեամբ եւ հարուստ բու-
վանդակութեամբ, իր գրաւիչ արտաքինով ան-
գամ նա սիրելի է դարձել ամենքին համար:

Հայ մամուլը առանց «Մշակի» շատ չոր ու
ցամաք, անհետաքրքրական, գրեթէ անայլ մի
բան կը լինէր:

«Մշակը» մեր սիրելի ընկերն է, մեր ան-
կեղծ բարեկամը: Նա մեզ միշտ արթուն է
պահում, ներշնչում է մեզ կենքը, ոգեւորում—
մղում է մեզ դէպի անընդհատ գործունէու-
թիւն, դէպի արդիւնաւոր աշխատանք: Նա սո-
վորեցնում է կենքը նպատակաւոր զարձակու-
միջոցները եւ, մի խօսքով, այս աշխարհում
երջանիկ ապրելու իսկական ճանապարհը:

Այսքանը բաւական չէ:
Ահա ձեզ գործ: Գործ՝ արժանի ամենայն
համակրութեան, գործ՝ արժանի զօրեղ աջակ-
ցութեան, եւ բարոյական ու նիւթական լիա-
նատ վարձարութեան:

Երկիրը կը սկսի արթնանալ իր թմրած
գրութիւնից և գործունէութեան մէջ կը
դնի իր երկրի հարստութեան աղբիւրները
և իր ազգաբնակչութեան արդիւնագործա-
կան ոյժերը:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ի Լ

Չը կայ ազգ, որ չը մտածէ իր մայրենի լե-
զուն հարստացնելու, զարգացնելու մասին: Նոյն
իսկ այնպիսի հարուստ համայնաբարձայն լեզու,
որպիսին է ֆրանսիականը, քանի-քանի ան-
գամ նկատվել է իբրեւ ժամանակի պահանջ-
ներից յետ մնացած, աղքատացած, եւ անբողջ
չարժուներ են տեղի ունեցել նրան նոր, կեն-
սունակ ու թարմացող հիւթեր հաղորդելու
համար. դեռ նորերումս, ինչպէս հաղորդելու
մենք, ֆրանսիացի մի գիտնական պահանջում
էր, որ լեզուն աւելի պարզ ու հեշտ ձեւեր
ընդունէ, որպէս զի դատապարտված չը լինի
իր առանցութիւնը միջազգային ասպարէզում
տալ ուրիշ լեզուներին: Եւ եթէ թողնենք
Ֆրանսիան, կը տեսնենք, որ համարեա ամեն
մի երկրում կայ նոյն եւ աւելի մեծ չափով
հողացողութիւն ազգային լեզուի մասին: Հէնց
այն հանգամանքը, որ մենք, հայերս էլ, չը
նայած մեր յետամնացութեան, մեր մտաւոր
լինդութեան, ջանքեր ենք անում մեր գրա-
կան լեզուն որքան կարելի է մշակված ձեւերի
մէջ դնելու, չէ ցոյց տալիս, որ երեւոյթը հա-
մայնաբարձայն է, չէ ցոյց տալիս, որ ամեն մի
առանջադիմող ազգ պիտի իր հետ տանէ եւ
լեզուի ընթացիկ անսպառ պահանջը: Ի՞նչպէս
զոնացում տալ այդ պահանջին—Այս հարցի
առջեւ մի զարմանալի միանմանութիւն ենք
նկատում ամեն տեղ: Ուր որ հարց է լինում
լեզուն հարստացնելու, կենդանացնելու մասին,
իսկայն առաջ է դալիս լեզուադէտներ մի ժո-
ղով, մի ակադեմիա, ուր փորձով եւ գիտու-
թեամբ օժտված մարդիկ կանօններ եւ օրէնք-
ներ են մշակում բազմակողմանի, խորիմաստ
խորհրդակցութիւններից յետոյ եւ ապա լոյս
են հանում իբրեւ օրէնսդրութիւն, պարտաւո-
րեցնում են ամենքին հպատակվել դրան, եւ
անա այդպիսով լեզուն ստանում է այն, ինչ
ցանկալի է համարվում ամենքի կողմից: Այդ-
քան բարձր ենդիմակրութեան վրա ամեն տեղ
են աչք տնկում, եւ սակայն, վերջ ի վերջոյ
դուրս է գալիս, որ լեզուն հարստացնելու,
կենդանի եւ աշխոյժ դարձնելու համար չը
պէտք է գիմել ակադեմիաներին, այլ պահուի-
ները, սրճարանները եւ այլ այսպիսի տեղեր,
ուր ժողովուրդն է համարվում: Այս միտքը
յայտնվել է Ֆրանսիայում դեռ այն ժամանակ,
երբ կեղծ-կասկածականութիւնը տեղի էր տա-

լիս նոր ուղղութեան: Եւ այնուհետեւ, մի եւ
նոյն այդ հասկացողութիւնը ղեկավարել է այն
բոլոր մարդկանց, որոնք կարողացել են լեզու
կենդանացնել: Անցելով օրերում Պետերբուր-
գում, գիտութիւնների ակադեմիայի մի նիս-
տում, նոր ընտրված պատուաւոր ակադեմիկոս
եւ յայտնի գրող պ. Կոնի մի ճառ արտասանեց,
որի մէջ ասաց թէ լրագրութիւնը փչացնում
է լեզուն: Այդ միտքը բողոք յարուցեց ոռուսաց
մամուլի մէջ, որ, ընդհակառակն, գտնում է
որ մամուլը մեծ ծառայութիւններ է մատու-
ցանում լեզուին:

Լրագրական լեզուի դէմ գործած յարձա-
կումների մէջ—ասում է «ՕՅՎ. Կըրբըր»
լրագիրը—մենք տեսնում ենք մի պարզ
թիւրիմացութիւն: Մեր խորին համոզմուն-
քով, ոչ մի բան այնպէս չէ նպաստում լե-
զուի տարածման, ամբարցման եւ հասակին,
ինչպէս մամուլը: Նրա կենդանի եւ անմիջա-
կան շիտակ իրականութեան հետ ստեղծում
է գաղափարների եւ պատկերների այն հա-
րուստ շեղանկանք, որի օգնութեամբ միայն
կարելի է հասնել լեզուի, իբրեւ ժողովրդա-
կան մտքի մեծ արտայայտիչի, զարգացման:
Անցել է այն ժամանակը, երբ զանազան շօ-
րացողներ, որոնք մեկենամաների հաշուով էին
սպրում, ինչ տարի նստում էին իրանց զը-
րական ոճը յղկելու համար, այժմ կենքը
չէ սպասում, լեզուն էլ նրա հետ է եւ, գու-
ցէ կորցնելով իր գրական յղկած արտաքինը,
ընդունում է ոյժի եւ արտայայտութեան
անխօսարկելի յատկութիւններ:

Եւ այսպէս, կենքին, ժողովրդին մօտե-
նալը—անա այն աղբիւրը, որտեղից լեզուն
կարող է եւ պիտի անսպառ գանձեր ստանայ:
Ոչ թէ օրէնքներ, ոչ թէ հրամաններ ու գրած
հրահանգներ.—ամենից առաջ այդ չէ հանդի-
ւոր. ամենից առաջ հարկաւորն այն է, որ
կենքին իր բազմակողմանի երեւոյթներով ար-
տայայտութիւն գանձ գրականութեան մէջ, հա-
զորդէ նրան իր ոյժն ու կենսունակ ճկունու-
թիւնը: Լեզուն կը զարգանայ, կը հարստանայ,
իր համար ձեւեր կը մշակէ, նա ինքը կը դառ-
նայ իր ընթացիկ արտաքինը, ինքն առաջ կը բերէ
օրէնքներ իր համար: Մեր մէջ ամեն մէկը, որ
ընդուն, «պոչազգեստ» բառ հնարելու չափ ի-
մաստութեան է հասել, վրդովվում է, երբ ժո-
ղովուրդը, արտեայ կենքը թողնում է այդ
արուեստական բառը եւ «ֆրակ» է դրոժ ա-
ծում: Մեզ ասում են, թէ հայոց լեզուն այն-
քան ճոխ եւ հարուստ է, որ ոչինչ փոխառու-
թիւն նրան հարկաւոր չէ. եւ անա տեսնում
ենք հին ձեւերի, շինու, արտայայտութիւնից
զուրկ բառակոյտերի մէջ սեղմված մի լեզու,
որ արհեստական միջոցներով հեռացվում է
ժողովրդից, մտնում է այնպիսի գրութեան
մէջ, որ անմարս, անհասկանալի, գուցէ եւ
խորթ է դարձնում նրան: Դեպի ժողովուրդ,
դէպի պարզութիւն, դէպի կենդանութիւն...

Սակայն «Մշակը» ունի եւ մի խոշոր, վերին
աստիճանի աչքի ընկնող պակասութիւն:

28 տարի նա լոյս է տեսնում նոյն դիրքով,
նոյն ծաւալով:

28 տարի առաջ՝ այդ դեռ գիտէր, իսկ այ-
սօր՝ այդ բանին մենք համաձայն չենք եւ
հաշտվել նրա հետ ամենեւին չենք կարող:

Գուցէ երեք տասնեակ տարիներ առաջ «Մը-
շակը» այնքան շատ կերակուր էր տալիս, որ
մենք բոլորս ուտել եւ ինչպէս հարկաւոր է
մարտել անգամ չէինք կարողանում: Բայց այ-
սօր այդ մի եւ նոյն «պօրցիան» մեզ համար շատ
քիչ է, շատ անբաւարար:

Նորածին մանուկին կերակուրում են կաթով.
մի ամիս, տասն ամիս կաթով: Յետոյ Յետոյ
էլ տալիս են նրա անցողութեան եւ հասակին
համապատասխան սնունդ:

Ուրեմն՝ դուք պէտք է փոխէք, պէտք է մե-
ծացնէք «Մշակը» ծաւալը: Անպատճառ:

28 տարի առաջ եւ այսօր՝ անհուն տարե-
րութիւն կայ...

Գուցէ դուք էլ փողը պատճառ բերէք:
Այդ պատճառը մենք չենք ընդունում:
«Մշակի» հանդուցեալ հիմնադիրը՝ Գրիգոր
Արծրունին գիշեր ցերեկ կանչում էր «բաժա-

անցին. հացի, մսի, ձուի, իւղի գները նախկին անասնի գրուածէն մէջ են գտնուում. ծրարը նաեւ այլ վնասներ պատճառեցին. գիւղացիները շատ ոչխարներ կտորովկ են քաղցից, ցըր-տից. նոյն իսկ երկնքի թռչուններն էլ կտոր-վել են... Գաւառից եկողները պատմում են, որ ձիւնը քանի որ երկար ժամանակ չէ հալ-վել, ֆախարանները ոչինչ չը գտնելով սա-ռած գետնի վրա, քաղցածութիւնից կտոր-վել են: Գիւղացին յուսահատուած է, չը գտնէ գրուած ուր վառիցնէ. այսքան տարիների ան-բերութիւնը եւ անսպողութիւնները նրան վերջին թշուառութեան են հասցնում»:

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Մեզանում փոփոխակի եղանակներ են անում» մէկ օր ցուրտ, բուք, ձիւն, միւս օրը անձրեւ, տաք, կարմիր արեւ: Օրովայ հարցը կենսական մը-թերքների թանգութիւնն է եւ տարածված տիֆ իւանդութիւնը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱՒ-ԱՅՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հարաւային Աֆրիկայի երկու հանրապետու-թիւնները զրկվելին իրանց ամենանշանաւոր գործակալները—Կրօնի գերի տարվել, իսկ ժուրէր, որ բոլոր գործերի հրամանատարն էր եւ մի եւ նոյն ժամանակ Տրանսվալի հան-րապետութեան փոխ-նախագահը, վարձանվեց: Բաղդ վերջին ժամանակ թեքել է իր քմա-հած երեսը սակաւաթիւ հերոս ժողովրդից, այնպէս ինչպէս թեքեցին իրանց երեսները եւ-րօպական պետութիւնները եւ չը կամեցան նայել անգամ գէլի Հարաւային Աֆրիկա, որտե-ղից օգնութիւն խնդրելու ձայն էր լսուում Բայց եւ այնպէս փոքրիկ ժողովուրդը չէ յուսահատ-վում. նա վճռել է օրհասական դիմադրութիւն ցոյց տալ թշնամուն եւ մինչև արեան վերջին կաթիլը պայքարել իր մարդկային իրաւունք-ները: Ժողովրդի անսահման ոգևորութիւնը, նրա վառ հայրենասիրութիւնը գուցէ սապա-րել կը հանեն նոր Կրօնիներ եւ նոր ժու-րէրներ, որոնք յենվելով հէնց այդ անսահման ոգևորութեան եւ վառ հայրենասիրութեան վրա կը կորոզանան թանգ նստեցնել Անգլիա-յին երկու հանրապետութիւնների կործանումը եւ կամ, ո՞վ գիտէ, գուցէ նաեւ փրկել նրանց կործանումից:

Պիտէր-Յակօբ ժուրէր ծնվել է 1834 թուին Կանայթում (Կապի գաղթականութեան մէջ) եւ ծաղում էր մի հուզեցուտ ընտանիքից, որ XVII դարի վերջում գաղթել էր Կապիանդիա: Նրա հայրը մասնակցում էր բռնիքների բռնի գաղթականութեանն եւ մեռաւ Նատալում, որի սահմանից ոչ հեռու ապրում էր սովորա-բար եւ ինքը ժուրէր: Նա քաջ ծանօթ էր սահմանին մօտիկ գտնվող շրջանին եւ մասամբ հարաւային ծանօթութեամբ են ընդհատվում այն անոյ պատերազմական գործողութիւնները, որ ունեցան բռնիքը Նատալում 1881 թուին: Ժուրէրը Տրանսվալի առաջին արդարադա-տութեան մինիստրն էր եւ մի անգամ փոխա-րինեց նախագահ Բուրգալին, երբ նա գնացել էր Անգլիա: Յետոյ ժուրէր եւս Կրիզէրի հետ միասին ուղեւորվեց Լոնդոն միջնորդելու, որ Անգլիան ձանայէ Տրանսվալի անկախութիւնը: Միջնորդութիւնը անողութիւն չունեցաւ եւ պատերազմն անխուսափելի դարձաւ: Բռնի-քները հրամանատար ընտրեցին ժուրէրին: Այն յաղթութիւնը, որ նա տարաւ Մաշուբա սարի վրա տեղի ունեցած պատերազմում, հուշակեց նրա ստանդը:

Ժուրէրը քաղաքական հարցերում համա-միտ չէր չափազանց պահպանողական Կրի-զէրին եւ հակառակ նրան՝ անհրաժեշտ էր համարում ընթացիկ մտցնել Տրանսվալի պետական կեանքում: Որպէս զօրավար, ժուրէրը մեծ համարումն ունէր իր հայրենա-կիցները մէջ եւ շխտաբանիկ Պիտէր անունը ծանօթ եւ սիրելի էր ամենին: Արտաքին տես-քով նա բռնի կատարելատիպ էր. բարձրա-հասակ, երկար, փառահեղ մօրուքով եւ բաց-նորարար այնքանով, նրա ամեն մի շարժումը ֆիլիզական մեծ ոյժ էր ցոյց տալու: Այժման պատերազմի պատրաստութիւնները տեսնված են նրա զեկավարութեամբ. պատերազմի սկզբը նախան ծրագրեր նա էր մշակել: Այն ռազմա-գիտական առաւելութիւնները, որ ժուրէրը կա-րողացաւ ձեռք բերել պատերազմի սկզբում, երկար ժամանակ անգործութեան դատապար-տեցին անգլիացիներին: Նայելով լրագրական կցկտուր տեղեկութիւններին, որոնք համոզում են մեզ բռնիքների բանակից, ժուրէրը Լէզի-

Միջին պաշարման ժամանակ վերաւորված էր ուժերի կտորով եւ ապա հիւանդանոցով զրկու-ված էր իր պաշտօնը կատարելու հնարաւո-րութիւնից: Հեռագրերը հաղորդեց, որ ժուրէրի տեղ զօրքերի գլխաւոր հրամանատար նշանակ-ված է Լիւբուրի Բոտա:

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Քէհրան, մարտի 9-ին «Մշակի» անցեալ տարվայ № 215-ում մենք հաղորդել էինք Սպահան նահանգի Փէրիա գաւ-առի Նամակերտ հայաբնակ գիւղի բնակիչներին դատը Միւրգա-Մուրթուզ-խանը դէմ՝ «Քեհարէզգեայ» անունով կալուածքի մասին: Ինչպէս գրել էինք, հայերը պնդում էին, թէ այդ կալուածքն իրանց է եւ իրանք պատշաճաւոր կալուածագրով գնել են մի պարսիկից, այն ինչ Միւրգա-Մուրթուզ-խանը պնդում էր, որ այդ հողն արժեւանական է եւ ինքը գնել է կալուածարութիւնից: Այդ դատին ներ-կայ էին Միւրգա-Մուրթուզ խանը եւ Նամա-կերտ գիւղի հայ ներկայացուցիչները: Հայերի հաւատարմատարն էր Քէհրանի հայոց ս. Գէորգ եկեղեցու խաչատուր քահանան, որի շնորհիւ հայերը կորոզացան տանել այդ դատը:

Դատաւորը արտաքին գործերի մինիստրն էր, որ սաայ հայերին. «Եթէ արժեւոր հողերի մա-տեանի մէջ լինի, որ այդ հողը պատկանում է տէրութեանը, այն ժամանակ նա կը մնայ տէ-րութեանը, իսկ հակառակ դէպքում՝ հայերին»: Հայերը համաձայնեցին, եւ այդ մտքով ստո-րագրութիւն տուին: Դատաւորը բացեց մա-տեանը, ուր, իր սակով, գրված է, որ «Քեհա-րէզգեայ» գետինը պատկանում է տէրու-թեանը: Գահանան պարսկերէն լաւ կարգով իմանալով ինչդեպ, որ մատեանը տան իրան նայելու, նրա խնդիրը կատար-վեց: Գահանան անձամբ կարգեց եւ հաս-կացաւ, որ «Քեհարէզգեայ» մօտ գտնված մի տարիչ գետին է պատկանում տէրութեանը, իսկ «Քեհարէզգեայ» մասին ոչինչ չէ յիշված, այն ինչ նա է կուսածղիկը. ուստի խնդրեց, որ բացեն այն տեղը, ուր «Քեհարէզգեայ» մասին է խօսվում: Ծուտով բացվեց մատեանի այդ տեղը եւ երեւաց, որ ճիշդ այդ հողը պատկա-նում է հայերին, ուստի վճռվեց, որ այդ հողը մնայ հայերին:

Հայերը այդ մասին հրաման առան սաղար-գամից Զիլի-Սուլթանի անունով, որպէս զի կարողանան անարգել տրիւն այդ հողին: Հե-տաքերը է, թէ ինչ կասի Զիլի-Սուլթանը եւ այս անգամ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Վարդէլ-Բուսօի հակառակորդների փոր-ձերը կործանելու ֆրանսիական այժման մի-նիստրութիւնը, քիչ էր մնացել, որ պակասէին անողութեանը: Մարտի 13-ին պատրաստաւոր-ները ժողովը քննում էր կառավարութեան ուղղած հարցապնդումը Մարտինիկ կղզու- վրա տեղի ունեցած անկարգութիւնների վե-րաբերմամբ, որի մէջ իււստով էին եւ զօր-քերն ու սպանել 9 բանտրների: Այդ հարցա-պնդումն ամբիթ տուեց Մելիքին եւ Բիբօնի փորձել կործանելու միանորթութիւնը: Բօպէն անող էր ներմուծւած: Կառավարութեան մեծա-մասնութիւնը արդէն բաւականաչափ պակասել էր այն ժամանակ, երբ ժողովը քննում էր գերձակ Պակէնի պատաւար լէզիօնի շքանշան տալու հարցապնդումը: Սօցիալիստները դժգոհ էին զօրքի կոպիտ միջամտութիւնից: Բացի դրանից պատրաստաւորների ժողովի պահան-ջում լուր էր տարածված, իր թէ մի քանի օտարերկրեայ միապետներ կողմնակի կերպով տեղեկացրել են, թէ նրանք չեն կարող այցելել համաշխարհային ցուցահանդէսը, եթէ նրա տէ-րը պէտք է լինի սօցիալիստ Միլիթրան: Այդ ա-մենը նպատաւոր հանգամանքներ էին այժ-ման մինիստրութեան հակառակորդների հա-մար: Մինիստրութիւնը միայն մի ձայնի առա-ւելութիւն ստացաւ ժերվիլ-Բօյի օրհանրիքի բանաձեւը քուէարկելու: Բայց եւ այնպէս երկրորդ եւ վճռական քուէարկութեան ժամա-նակ, երբ սօցիալիստները մի մասը նախընթաց միջամտութիւններից համոզվեց, որ Վարդէլ-Բուսօի կարգիտի անկողնով կարող են օգու- վել միայն Բիբօնի եւ Մելիքի նման հանրապե-տականները, դադարեց կառավարութեան հա-կաւարկելուց եւ ձայն տուեց յօգուտ մինիստ-րութեան, որ եւ 53 ձայնի առաւելութիւն ըս-տանալով ազատվեց անկողնից:

—Ղազի-Օսման-փաշայի մահուան լուրը հերք-վում է Կ. Պոլսի լրագրիներում: Օսման-փա-շան յիւրախ հիւանդ է եղել մի քանի շաբաթ, բայց յետոյ սկսել է կազդուրվել եւ անցել երեւջարթի մինչեւ անգամ ընդունել է իր բա-րեկաններին, որոնք եկել էին նրան տեսնելու:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐՄԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

20 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 19-ին Նոցա Մե-ծութիւնները, Թագաժողովը եւ Մեծ Իշխան-ները այցելեցին այն կոնցերտը, որ տրվում էր յօգուտ ինվոլիդների Մարիինսկի թատրօնում: Մարտի 20-ին Թագուհի Կայսրուհին այցե-լեց կանանց ազգաբնական ընկերութեան Միխայլօսի եւ Սուխարեվսկի ուսումնարան-ները:

ԼՕՆԴՕՆ: Մարտի 16-ին Բուէնօս-Այրէսից հաղորդում են «Times»-ին. «Կիրակի օրից սկսած այստեղ 200 միլիոնոր անձրեւ եկաւ. այս տեսակ բան երբէք այստեղ պատահած չէր: Քաղաքի հիւսիսային, հարաւային եւ արեւ-մտեան մասերը հեղեղված են անձրեւից: Եր-կաթուղային եւ այլ ամեն տեսակ յարաբերու-թիւն մասամբ դադարեցրած է: Երկիւղ են կը-րում, թէ սիւնիդի ցանքերը կարող են վը-նասված լինել: Յորենի արտերը մեծ մասամբ արդէն վնասված են»:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Ինչպէս հաղորդում են, ներ-քին գործերի մինիստր օգնական Ուէքստեր Դէվիս, վերադառնալով այստեղ Հարաւային Աֆրիկայից, հրաժարվեց պաշտօնից: Նա վարձեց մի թատրօն, որի մէջ մտադր է դասախօսու-թիւններ կարգաւ, եւ գովելով բօքսերին ու պարսաւելով անգլիացիներին, պահանջել Միա-ցեալ-Նահանգների միջամտութիւնը:

ՍՏՕԿՀՈՒՄ: Այսօր վախճանվեց նախկին մի-նիստր-նախագահ բարօն Գուստաւ Ակերհեյմ: ԳՐԻՍՏԻԱՆԻԱ: «Altonposten» հաղորդում է հետեւեալ հեռագիրը Նոր-Չիլանդիայից, մար-տի 19-ից, որ ուղարկել է Բօրի Գրիվիլիկի հարաւ-բեւեռային էկպէզդիան. «Էկպէզդի-ցիան իր գործը կատարեց. հարաւային մագ-նիսական բեւեռի դիրքը որոշված է: Ամենա-վերջին կէտը, որին հասաւ էքպէզդիան սահ-նակներով, 78° 50', 2օօրօք Նիկոլայ Հանսէն Գրիտիանդուհից վախճանվեց: Մնացեալները անող չեն: Մինչև այժմ ոչ ոք 78° 2'-ից հեռու չէ անցել»:

ՀԱՍԳԱ: «Memorial Diplomatique»-ի տա-րածում լուրը, թէ իբր Անգլիան դիմել է հօլ-լանդական կառավարութեանը եւ բողոքել է ծաղրանկարների ու վիրաւորական բովանդա-կութիւն ունեցող գրուածքների տարածման դէմ, պաշտօնապէս անհիմն է ձանաչված,

ԼՕՆԴՕՆ: Բլումֆօնտէնի վրայով հաղոր-դում են Բուշմանիօպից. «Հեծեղազօրքից, երկու արտիլերիական բաւարէանները եւ հեծեալ հետեւակներից բաղկացած զօրքերը՝ հրամանա-տարութեամբ գնդապետ Պիլլերի, որոնք զը-տնվում էին առաջ Տաբանդում, երկէ գիշեր ստիպված էին յետ նահանջել, որովհետեւ մօ-տենում էր բօքսերի մի ստուար զօրարժեան: Անգլիական զօրքերը դնային դէպի Բլում-ֆօնտէնի շրանջը, Մօզելի գետից հա-րաւ, որտեղ եւ առաւօտեան ժամը 4-ին բանակ դրին: Լուսարային բօքսերը սկսեցին անընդմեջ անգլիացիներին Բրօզիօրդ առաջ ուղարկեց սպախումը եւ բաւարիաները, թողնելով մնացած զօրքերը նահանջը պաշտ-պանելու համար: Սպախումը մտաւ գետի խոր տաշար, որտեղ թագնված էին բօքսերը. այսպիսով ամբողջ զօրարժեանը ընկաւ թա-կարգի մէջ եւ գերի առնվեց վեց թնդանօթնե-րի հետ միասին: Մարդկային զօների թիւը քիչ էր, որովհետեւ մարդկանց մեծամասնութիւնը թակարգն ընկաւ առայլ, քան անգլիացիները կը կարողանային նոյն իսկ մի հրացան արձա-կել: Գնեւերալ Կօլիլիլի դիվիզիան, որ այսօր առաւօտեան զուրս եկաւ Բլումֆօնտէնից, ե-կաւ այստեղ ժամը 12-ին եւ թնդանօթանդու-թիւն սկսեց թշնամու դէմ»:

ՍԻՆԵՆՅԵ: 11 հոգի հիւանդացան ժանտախ-տից, երկուսը նրանցից մեռան:

ՊԷԿԻՆ: Անգլիական միսիօնէր Բրուկսի պայանման պատճառով անողվեց գլխատել տալ երկու բարդապայանների, մէկին դատապարտել ցմահ բանտարկութեան, մէկին տասնամյակ եւ երկուսին երկու տարվա բանտարկութեան: Չինական կառավարութեան հաշով սպանու-թեան տեղում կը կառուցվի մի մատուռ, որի վրա կը կայնվի տախտակ եւ նրա վրա կը գրվի սպանութեան պատմութիւնը:

ՀՆԼՍԻՆԳՅՅՕՐՍ: Մարտի 19-ին այստեղի Ալէքսանդրեան թատրօնում, գնեւերալ-նահանա-գապետի եւ բազմաթիւ հասարակութեան ներ-կայութեամբ տեղի ունեցաւ զինւորական կօն-ցերտ, որին մասնակցում էին Հէլլիքֆօրսի

եւ Սվեարուրդի բերդապահ զօրքից 400-ի չափ առաւ եւ ֆին երաժիշտներ եւ երգիչներ: Հա-ւաքված զուսարը յատկացվում է յօգուտ Ֆին-լանդիայում անընթրութիւնից վնասվածների: ՄՕՍԿՎԱ: Մարտի 19-ին տօնվեց Նիկոլանվ-սկի զինւորական անկեղնոյի գոյութեան յիս-նամակը: Նախ հողահանգիստ կատարվեց Կայսրեր Նիկոլայ I-ի եւ Ալէքսանդր II-ի համար, ապա գոհացողական մաղթանք այժմ թագաւորող Կայսրի եւ ամբողջ Օղոստախաւ Ընտանիքի արեւաշատութեան համար:

21 մարտի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վարչախի պալատական վարչութեան գլխաւորի օգնական գնդապետ Մօսօլովին հրամայված է լինել պալատի մի-նիստրութեան զիւանատան կառավարչի պաշ-տօնակատար:

Մարտի 20-ին փակվեց առաջին համառու-սական արհեստարարների համագումար ժողովը: ԼՕՆԴՕՆ: Բօքսերս հեռագրում է Բլումֆօն-տէնից, մարտի 19-ից. «Հէնց նոր ստացվեց տեղեկութիւն, որ բօքսերը հեռացան Լէզի-րեանդտի ուղղութեամբ, չը վերցնելով իրանց հետ սնդիլական գերիներին. մօտ 70 մարդիկ թողնված են ջրանցքի մօտ, ուր մենք իսկոյն ուղարկում ենք սանիտարական խումբ»:

Բօքսերս հեռագրել է, թէ այցելեց այն տե-ղը գետի վրա, ուր բօքսերը թակարգ էին մտել: Մեր աչքի առջև բացվեց մի սարսափելի տեսարան. տեղը ծածկված է ձիւրի գիւղեր-րով, սայլերի կտորտանքներով եւ զանազան պատերազմական իրերով, տեղ-տեղ երեւում են մարդկային մարմիններ: Ծանապարհի վրա գտնվող մարդկանց ոգու արեւութիւնը միայն ար-գելեց՝ ամբողջ զօրարժեան ջնջուում: Մէկ բա-տարէային անողվեց հեռանալ, չը նայելով գօ-րեղ կրակին, որից յետոյ ինքն էլ սկսեց կրակ թափել: Թշնամին կորցրեց հինգ սպանված եւ ինն մարդ վիրաւորված:

ՊԷՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնապէս: Բլումֆօնտէնի եւ Տաբանդի միջև բօքսերը գրաւեցին վեց թնդանօթ եւ 200 սպլեր:

ՊԷՏԵՐԲՈՒՐԳ: Բրանդֆօրտի չրջականերում ուրբաթ կրկին պատերազմ տեղի ունեցաւ: Մանրաման տեղեկութիւններ չեն ստացված նրա մասին, բայց, այնու անհնային, մասնա-ւոր տեղեկութիւնների համաձայն, լսում է, որ դաշնակից զօրքերը մեծ վնաս են հասցրել անգլիական ուղաններին: Բօքսերի կողմից միայն մի քանի վիրաւորվածներ կային: Ծա-բաթ օրը Բրանդֆօրտի ուղղութեամբ կրկին լսվում էր թնդանօթանդութեան ձայն: Ուրիշ տեղեկութիւններ համաձայն չարաթ օրը Մէֆիկիդի մօտ պատերազմ տեղի ունէր այն զօրարժեանի հետ, որը գնում էր այդ քաղաքն ազատելու համար գնդապետ Պրուէրի առաջ-նորդութեամբ, որը ստիպվեց վերջապէս կո-րուստներով յետ նահանջել:

ԲՈՒՇՄԱՆԿՕՊ: Բօքսերը մնացին երէկվայ պատերազմի տեղը մինչև այսօր առաւօտը եւ ապա յետ քաչվեցին, տեսնելով որ անողվական զինւորները գտան անգլիական բոլոր վիրա-ւորվածներին: Բօքսերի հրամանատարն էր Բէլլման: Նրանք այդ տեղի վրա թողին ի-րանց հետ եղած զինւորական կցորդներին, այդ կցորդներից մէկը հօլանդացի Նիկա՝ ծա-նըր վիրաւորված է:

ԿԻՄԲԵՐԼԷՅ: 400 բօքսեր կանգնած են Բէտէզօնի մօտ, 700—Վիտրանդի մօտ, դէպի հիւսիս Կլիպպալից եւ մօտ 6000 հողի կանդ-նած են Վալա գետի երկարութեամբ Ծօր-տինստրիմից մինչև Որիտախիսա:

ԼՕՆԴՕՆ: ԱԷլյուէրի գործակալութիւնը լսել է, որ զեռ ճիշդ կերպով որոշված չէ այն ճա-նապարհը, որով պէտք է Բօքսերային համար նշանակված զօրքերն ուղարկվեն Կարլինգտօնի հրամանատարութեամբ:

ԲԻՉԿՕՆԳ: Երէկ ամի մօտ ծովային աւա-զակները բռնեցին անողիական միակայմ նաւը, որը քաշում էր իր ետեւից մի բեռնակիր նաւ: Նաւի լօցմանը սպանվեց, իսկ բեռնակիր նաւը կողոպտվեց, իսկ բեռների վերակացուին աւա-զակները իրանց հետ տարան:

ԼՕՆԴՕՆ: Համաքնները ժողովը Բրօզիկ յայտարարում է, որ անողիական կառավարու-թիւնը ոչինչ հիւք չունի մտածելու, թէ պօր-տուղապական կառավարութիւնը կարող է ան-տես աննել որ եւ է պարտաւորութիւն եւ նա չէ թող տալու կօնաբարանդա դատարկել Լօ-րէնցօ-Մարկիւզիում: Գերի բօքսերին ս. Հե-զինէ կղզին տեղափոխելու հարցի առիթով հաղորդվեց, թէ անգլիական կառավարութիւնը ամենալուրջ կերպով քննեց ամբողջ հարցը, բայց հիւք չը գտաւ հրաժարելու գերիների մի որոշ թիւ ս. Հեղինէ կղզին ուղարկելու:

